Հայտարարություն

Մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ Արմավիրի մարզպետարանը հայտարարում է մրցույթ **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության մասնագետի (ծածկագիր՝ 93-1.4-Մ6-1)** թափուր պաշտոնը համալրելու համար և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա **2022 թվականի հունվարի 20-ին, ժամը 11.^{00}-ին** ՀՀ Արմավիրի մարզպետարանի վարչական շենքում (ք. Արմավիր, Աբովյան 71):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

1) Անձնագիր (ՀԾ համարանիշ) կամ նույնականացման քարտ
2) դիպլոմ (առկայության դեպքում)
3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ **111.115** (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ http://armavir.mtad.am/files/docs/52477.pdf

Աշխատավայրի հասցեն է՝ ՀՀ Արմավիրի մարզպետարան, ք. Արմավիր, Աբովյան 71):

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է **2022 թվականի հունվարի 17-ը:**

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 0237-2-16-29 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն armavir.andznakazmi.karavarum@gmail.com էլեկտրոնային հասցեին: